Սոս Սարգսյան



Հայ անվանի դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:

Ծնվել է 1929թ. Ստեփանավան քաղաքում: 1948թ. տեղափոխվել է Երևան և աշխատել Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում որպես դերասան: 1954թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը: Ինստիտուտն ավարտելուց հետո գրեթե չորս տասնամյակ՝ 1954-1991թթ., աշխատել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում: 1991թ. հիմնադրել է «Համազգային» թատրոնը, որի գեղարվեստական ղեկավարն է առայսօր: 1997-2000թթ. եղել է Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի ռեկտորը:

2008թ.-ից եղել է ՀՀ հանրային խորհրդի անդամ:

Մահացել է 2013թ. սեպտեմբերի 26-ին:

Առաջին դերը թատրոնում «Դավիթ Կոպերֆիլդն» էր (1947թ.), հետագա կերտած դերերից են՝ ԴոնՔիշոտը, Յագոն, Ջոն և Լիր արքաները, «Հացավանի» Մացակ ապերը, Սանիտայի թաղապետը և այլն:

Նկարահանվելէ քառասունից ավելի գեղարվեստական ֆիլմերում, որոնցից են՝ «Նվագախմբի տղաները» (1960թ.), «Տերն ու ծառան» (1962թ.), «Եռանկյունի» (1967թ.), «Մենք ենք, մեր սարերը» (1969թ.), «Խաթաբալա» (1971թ.), «Նահապետ» (1977թ.), «ՋորիՄիրո» (1979թ.), «Գիքոր» (1982թ.), «Խնձորիայգին» (1985թ.):

ՌԴ ռեժիսորների նկարահանած ֆիլմերում առավել հայտնի են նրա խաղացած Գիբարյանի (Տարկովսկի, «Սոլյարիս», 1972թ.), թափառիկ արտիստի (Վ. Բորտկո, «Առանց ընտանիքի», 1984թ.), Ֆեոֆան Պրոկոպովիչի (Ա. Պռոշկին, «Միխայլո Լոմոնոսով», 1986թ.) դերերը:

Նրա մտավորականի կերպարը լավագույնս ներկայացված է անվանի ռեժիսոր Կիմ Բակշիի «Մատենադարան» վավերագրական ֆիլմաշարում: Ստեղծագործել է նաև որպես բեմադրիչ ունի թե՛ թատերական, թե՛կինոբեմադրությունների հաջողված փորձեր: